ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի, գ. Բերդաշենի և գ. Կապսի, ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի, գ. Ջիլի, գ. Աղբերքի Շատջրեքի, ՀՀ Սյունիքի մարզի գ. Հարժիսի, գ. Վաղատինի և գ. Դարբասի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/26 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 3-րդ չափաբաժնի մասով 2020 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/26-3 գնման պայմանագրում 2021 թվականի օգոստոսի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 06.05.2021թ N741-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/26-3 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4
23.09.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 գնման պայմանագրի

ք. Երևան «11» 08 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 06.05.2021թ. N 741-Ն որոշումը և ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Եղեգիսի, գ. Չիվայի և գ. Գոմքի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 23.09.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել 2021 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջերից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
կառավարական տուն 3	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150009355815863
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01528652
Հ/Հ 900011035731	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ա. Վարդանյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված
23.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 գնման պայմանագրի
«11» 08 2021թ. կնքված N 4 համաձայնագրի

<<Հավելված
23.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավե-րով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Մինչև 2020 թ. վճարված գումարը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	71351540/8	ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Եղեգիսի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	2 944 530	-	-	785 900	3 071 800	3 071 800	3 071 800	6 407 500	8 648 293	8 648 293	13 000 486	13 000 486	13 000 486	**13 000 486**

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035731
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652

Տնօրեն՝

_____ Ա. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 5036-02

«09» 08 2021

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքված N «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22» պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,344,480 (մեկ միլիոն երեք հարյուր քառասունչորս հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22» պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքված պայմանագրով նախատեսված ծառայություններն ամբողջ ծավալով մատուցելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 01.06.2022թ.: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22» կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 5037-02

«09» 08 2021

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի միջև կնքված N «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22» պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,300,050 (մեկ միլիոն երեք հարյուր հազար հիսուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22» պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքված պայմանագրով նախատեսված ծառայություններն ամբողջ ծավալով մատուցելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը՝ ներառյալ երաշխիքային ժամկետը, բայց ոչ ուշ քան 01.06.2023թ.: **Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:**

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության Նախագահ՝ Ա. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am